ՀՏԴ 82.09 *Գրականություն*

Սիրունիկ Բաղդասարյան
ԱրՊՀ դոցենտ, բ.գ.թ.

ԶԻՆՎՈՐՅԱԼ ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ԸՍՏ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԴԱՐԱՎԵՐՋԻ ՀԱՅԸ» ՎԵՊԻ

«Դարավերջի հայը»վեպի գլխավոր հերոսի և նրա ընտանիքի օրինակով Մկրտիչ Սարգսյանը բացահայտել է 21-րդ դար մտնող մարդկանց, զինյալ հայդուկների պայքարն ու մտորումները: Նրանք հայրենիքի ճակատագրով ապրող, այդ նույն հայրենիքի արժանապատիվ կեցության, պայքարի և հաղթանակի,ապագայի նկատմամբ լույս հավատով,հպարտությամբ տոգորված հայի հավաքական կերպարներ են:

Բանալի բառեր. *Մկրտիչ Սարգսյան, հրապարակախոսական վեպ, Արցախի ազատագրական պայքար,հանրահավաք,զինվորյալ հայի կերպար,հաղթանակ:*

Сируник Багдасарян

ОБРАЗ *АРМЯНСКОГО СОЛДАТА* В РОМАНЕ МКРТИЧА САРКИСЯНА «АРМЯНИН ВЕКА»

На примере главного героя романа «Армянин века» и его семьи Мкртич Саркисян отразил судьбы людей XXI века и борьбу вооруженных воинов. Это собирательные образы гордых армян, живущих судьбой и бытом своей родины, борьбой и победой и с верой в будущее.

Ключевые слова: *Мкртич Саргсян, публицистический роман, Освободительная борьба Арцаха, митинг, образ армянского солдата, победа.*

Sirunik Baghdasaryan

THE IMAGE OF THE ARMENIAN SOLDIER IN MKRTICH SARGSYAN'S NOVEL "ARMENIAN OF THE CENTURY"

With the example of the main hero of the novel "The Armenian of the Century" and his family, Mkrtich Sargsyan reflected the destinies of people of the 21st century and the struggle of armed hayduks. These are the collective images of proud Armenians, living with the fate and realities of their homeland, with struggle and victory and with faith in the future.

Key words: *Mkrtich Sargsyan, publicistic novel, Artsakh liberation struggle, meeting, the image of an Armenian soldier, victory.*

Մկրտիչ Սարգսյանը կարելի է ասել կյանք և գրականություն մտավ պատերազմով: Պատերազմի թեման միշտ եղել է Սարգսյանի համար կարևոր թեմաներից մեկը:Այդ հետաքրքրությունը պատահական չէ. իր սերնդի բազմաթիվ գրողների նման նա ևս պատերազմի առաջին օրից մինչև հաղթական ավարտը եղել է ռազմաճակատում, գործող բանակում:

Պատերազմն է, որ հիմնականում կերտեց նրա կենսակերպն ու գրողական խառնվածքը, որն իր արտացոլումը գտավ նրա բանաստեղծական, արձակ և հրապարակախոսական ժողովածուներում: Պատերազմի թեման նա ընդգծեց նաև արցախյան ազգային-ազատագրական շարժմանը նվիրած իր հրապարակախոսական հոդվածներում և առանձնապես «Դարավերջի հայը» վեպում:

Այս երկը գեղարվեստականի, հրապարակագրության և վավերական փաստերի մի յուրահատուկ շաղախով է կերտված, որի սկզբից մինչև վերջ գրողը իր տեսադաշտում է պահում հայ ժողովրդի հավաքական ճակատագիրը, որ տվյալ դեպքում Արցախի ճակատագիրն է: Հետաքրքիրն այն է, որ վեպում լիովին բացահայտվում են այն հոգևոր և բարոյական գործոնները, որոնցով հայ ժողովուրդը մտնում է 21-րդ դար,իսկ սրբազան , համաժողովրդական պատերազմի ահեղ բոցերում թրծվում է դարավերջի հայ մարդու կամքն ու բնավորությունը: Ստեղծագործությունը հիմնականում պատմական է, միաժամանակ նրանում արծարծված են մարդկային և բարոյական ժամանակակից խնդիրներ:

Վեպի կենտրոնում գրող Արամազդ Արամյանն է, ով վիպական գործողությունները լրացնում է հուշերով ու անձնական մտորումներով:Գրողն այստեղ հանդես է գալիս որպես գրող-պատմաբան , դեպքերի տարեգիր, հանգամանքների մեկնաբան և զգացմունքների թարգման: Ճիշտ է նկատել գրականագետ Նորայր Ադալյանը.«Ժամանակակից գրականությունն ունի բնորոշ մի առանձնահատկություն. Նրանում ոչ այնքան իրականությունն է խոսում, որքան հեղինակի անձնավորությունը Կարող են ,որ միշտ այնպես է եղել:Այո՛,բայց այժմ դա արվել է և հավանաբար կհասնի « հիվանդագին» աստիճանի:Ստեղծագործության շարժիչ ուժը իրականությունից կամաց-կամաց դուրս է գալիս և բուն դնում հեղինակի մեջ»[1]:

Սարգսյանի ստեղծագործություններում ոչինչ չկա մտացածին և արհեստական. նրա կերպարների նկարագրերը միշտ բնական են, անմիջական և որ ամենակարևորն է՝ հայրենանվեր:

Հիրավի, զինվորյալ հայդուկներն իրենց պատճառաբանված հերոսությունն ու խիզախությունն ունեին, Արամազդը՝ ավագի իր իրավունքով ուներ իր բարոյական նկարագիրը, ով անմասն չէր կարող լինել Արցախի ճակատագրի հանդեպ, ով որպես ակտիվ քաղաքացի ապրում էր Արցախով և Արցախի համար՝ գտնելով, որ այն Հայաստանի անբաժանելի մասն է ու նաև՝ իր էության անբաժանելի մասը:

Պատմությունը մտնում է քսանմեկերորդ դար, իսկ սրբազան, համաժողովրդական պատերազմի ահեղ բոցերում թրծվում է դարավերջի հայ մարդու կամքն ու բնավորությունը:

Արամազդն ապրել է հասարակական մի ամբողջ ֆորմացիա և իր կենսագրության մեջ կրել է այդ ֆորմացիայի սոցիալական, բարոյական և աշխարհայացքային նորմերն ու ըմբռնումները և այժմ ականատես է այդ ամենի փլուզմանը՝ հեղաբեկվող աշխարհի փլատակների տակ թաղելով մի ամբողջ քաղաքակրթություն:

Վեպի հենց առաջին էջերից ներկայանում են Արամազդն ու իր ընկեր Հարությունը, որոնց խոսակցության նյութը Արցախն է. «Այսօրվա խոսքի ու զրույցի թեման Ղարաբաղն է, հայոց հզորության միջնաբերդը, ուր մարդիկ աշխարհին նայում են արծվի թռիչքի բարձրությունից և արծվային անկաշկանդ ազատությամբ»[2]:

Վեպի սյուժետային առաջին գիծը ղարաբաղյան շարժման պատմությունն է, որն սկսվել է մարզգործկոմի 1988թ. սեսիայի հայտնի որոշումից: Նշանակում է, վեպի ժամանակը ազգային անկախության տասնամյակի ներքին տեղաշարժերն են: Երկն ունի քաղաքական լիցք, սրություն, իսկ կենտրոնական հերոսի՝ Արամազդի կենսափիլիսոփայությունը, սերն ու ատելությունը, հայրենասիրության դրսևորման, բռնկումների հետաքրքիր ու ինքնատիպ էջերը ուշագրավ են դարձնում ընթերցումը, միաժամանակ ընդգծում, որ վեպն իր կառուցվածքով և բովանդակությամբ նորություն է Սարգսյանի արձակում:

1988թ. սկսված արցախյան շարժումը, որը համայն հայության հավաքական ուժի ցուցադրումն ու հաստատումը եղավ և որով հիմք դրվեց հայ ժողովրդի ազգային զարթոնքին, իրավամբ համեմատում են Ավարայրի ճակատամարտի և Սարդարապատի հերոսամարտի հետ: Երկուսն էլ ազատաբաղձ ժողովրդի աստեղային ժամերն են, մեկը մյուսի շարունակությունը. չլիներ Ավարայրը, չէր լինի և Սարդարապատը, չլիներ Սարդարապատը, հազիվ թե լիներ արցախյան շարժումը:Եվ այսօր, ինչպես որ սերունդների համար թանկ ու սիրելի է Ավարայրի ու Սարդարապատի ամեն մի հերոս ու ամեն մի դրվագ, այնպես էլ թանկ են ու հարազատ արցախյան շարժման յուրաքանչյուր հերոս, յուրաքանչյուր դրվագ:

Վիպագիրը ներկայացնում է շարժման տարեգրությունը՝զուգորդելով այն իրերի վերլուծության հրապարակախոսական զեղումներով:

Ղարաբաղը ցանկանում էր անկախանալ, սակայն ազերիների քաղաքական լիդերները հարցի լուծումը տեսան միայն ու միայն արյան մեջ, հայերին ոչնչացնելու, Ղարաբաղը հայաթափելու մեջ: Վկա՝ սումգայիթյան եղեռնը: Արամազդին ծանոթ է մեր դրկիցների տակտիկան, բայց նա զարմանում է նաև Մոսկվայի լռությունից. «Այս պարագայում ինչպե±ս կարող է լռել Մոսկվան: Չէ՞ որ Ղարաբաղի վերքը կարող է ախտահարել նաև միության զորավոր մարմինը: Չէ՞ որ Սումգայիթի վայրի բռնկումը ցույց տվեց աշխարհին ինտերնացիոնալիզմի խորհրդային

[1] Ժամանակակից հայ արձակը, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1981.էջ 250:

[2] Բոլոր մեջբերումները կատարված են Մկրտիչ Սարգսյանի «Դարավերջի հայը» վեպից, Ե.,1999,էջ11:

տարբերակի սնանկությունը, սուտը, այդ քարոզչության խաբեությունը: Մոսկվան լռել չի կարող»(էջ 15):

Սկզբում հայերն ավելի մեծ վստահություն և հավատ ունեին Կենտրոնի հանդեպ, Խորհրդային կարգերի հանդեպ, քան ազերիները: Ուրախացնող էր այդ օրերին հայ ժողովրդի միասնական ձայնը: Ղարաբաղի հարցը թև առավ, գրավեց ամբողջ աշխարհի հայության միտքն ու ուշադրությունը, Երևանում ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն,Ստեփանակերտում՝«Կռունկը»:Երևանում և Ստեփանակերտում շարունակվում էին հանրահավաքները, ուր հավատով վանկարկվում էին «Լենին, պարտիա, Գորբաչով»,«Պայքա՞ր, պայքար մինչև վերջ» բառերը:Տրիբունաներում հերոսները փոխարինում էին մեկը մյուսին: Հայությունը համախմբվել էր, բռունցքվել. լսվում էին դարեր ի վեր հային միշտ զգոն պահող բառերը:

Արամազդը չէր ցանկանում մի կողմ քաշված, պասսիվ հայ լինել. Դա հակառակ է իր էությանը: Ասես այն հիվանդ, անկողնում գամված հիվանդը չէ. հագած-կապած սպասում է, որ Հարությունի՝ընկերոջ հետ գնա հանրահավաքի:

Ծանոթանալով Ղարաբաղի պատմությանը՝քաղաքակիրթ աշխարհը զարմացել էր, թե ինչպես է հայկական հանրապետության կողքին, նույն Միության կազմում ստեղծվել հայերով բնակեցված ինքնավար մարզ: Կատարվածի անտրամաբանական ու անարդարացի լինելը քողարկելու համար դրա հեղինակները մարզի անվանման մեջ գիտակցաբար բաց էին թողել «հայկական» բառը:

Արամազդին համակել էին մեկը մյուսին հաջորդող վերապրումները՝ցավի, զղջման, կարոտի բռնկումներով: Շուտով կուսակցական տոմսը, որ քառասուն տարի սրբությամբ պահվել էր, պատառ-պատառ, մանր կտորների բաժանված թափվեց հատակին: Բաց պատուհանից դուրս թռավ «ժողովուրդների բարեկամության» շքանշանը:

Սարգսյանը աստիճանաբար բացում է Արամազդի ներքնաշխարհը, դաժան օրերի հրամայական պահանջով՝ցուցադրելով լարված ջղերի, հայրենասիրական ապրումների բռնկումները: «Կաթվածահար է Արամազդը,- գրում է Ս. Սարինյանը,- կաթվածահար է նաև հասարակական այն ֆորմացիան, որի ուղեկիցն է եղել իր ամբողջ կյանքում և որը եղել է անառարկելի կեցություն: Եվ նա փորձում է հասկանալ ճշմարտությունը, ներկայի ու ապագայի հեռանկարը որոնել հեղաբեկվող կյանքի հետևանքներում»[1]: Կենսագրական հուշերը հատվում են վիպական ժամանակի իրադարձություններին՝գորբաչովյան պերեստրոյկան, Միության փլուզումը, հայոց ազգային-ազատագրական հեղափոխությունը, թուրք-ազերական ագրեսիան Արցախի դեմ, անկախ պետականության հռչակագիրը, որ շարժման մեջ էին դրել ազգի ֆիզիկական ու հոգևոր ներուժը:

Ինչու՞ է Արամազդն այսքան հաճախ վրդովվում, ինչի՞ց է նյարդային ցնցումը: Իհարկե, հավատի փլուզումից, հոգու ընդվզումից, սրբությունների փոշիացումից. «Ինքը միշտ եղել էր իր ժողովրդի, նրա առօրյա հոգսերի, կյանքի, մանավանդ պատմության հետ: Նրա սերը իր ժողովրդի նկատմամբ ընթանում էր ցավոտ մտորումներով և առողջ պոռթկումներով: Տակավին պատանի՝նա գիտեր, որ հայոց պատմությունը հաղթանակներով չի ընթացել, որ հայը կարծես հաշտվել է պարտություններին, քաղցին, բռնի և հարկադրական գաղթերին, հայրենիքը լքելուն և հետո մինչև մահ, գերեզման կարոտից մխալուն: Եվ ցավել է նրա պատանի հոգին: Բայց այդ ցավը, փառք Աստծո, չի ախտահարել իր էությունը, հառաչանքը չի փոխվել ողբի, լավատեսությունը չի խեղդվել անզորության, ազգի ոչ լիարժեքության, անհուսության մեջ , քանզի նա տեղյակ էր հայի հայրենասիրության հզոր բռնկումներին»»(էջ 35):

Հայի ապրելու կամքին գումարվեց աշխարհի գութը և բարությունը և հայը տոկաց: Ապրողները հասկացան, որ աշխարհն իրենց հետ է. մարդասիրության ցույց էր, գթասրտության հրավառության, իսկ հայերն էլ՝միաբան, համերաշխ: Նույն այդ ժամանակ Ադրբեջանը պիրկ էր սեղմում խեղդվող երկրի կոկորդը՝փակելով բոլոր կենսական ուղիները, որոնցով կյանք և օգնություն էր մտնում Հայաստան:

Սկզբում տարերայնորեն, հետո ավելի կանոնակարգված, սկսեց կազմավորվել հայկական բանակը: Հայերի կողմից ոչ մի գնդակ դեռևս չէր արձակվել, երբ իրագործվեց Սումգայիթի եղեռնը,

[1] .Գրական հայրենիք,2001թ.հ. 2:

երբ Շուշիի, Աղդամի, այնուհետև Խոջալուի ռազմական հենակետերից հրետակոծվում էին Ստեփանակերտն ու մյուս բնակավայրերը:

Արամազդը հաճախ էր լինում «Արցախ» կոչվող հրապարակում: Այստեղ հավաքվում էին ֆիդայիները, զոհվածներին ուղեկցում էին դեպի վերջին հանգրվան, զրուցում էին, վեր լուծում իրավիճակը: Ազատամարտիկները ճանաչում էին սիրելի գրողին և սիրում էին խոսքի բռնվել նրա հետ, խորհուրդներ հարցնել: Ազերիները չափն անցնում էին. անպատվում էին, թալանում, սպանում, բռնաբարում, բավական չէ՞ ասպետ լինել: Գրողի խոսքը համոզիչ է, բայց ազատամարտիկները հոգնել են իրենց «թուրքական գործոնով» վախեցնելուց, պետք է թուրքի հերն անիծել:

Հարուստ է Արամազդի կյանքի պատմությունը: Հլու իր ճակատագրին, նա այժմ ստիպված էր հեռվից հեռու մասնակցել պատերազմին: Բայց ենթատեքստային ուժեղ լիցք ունեցող նրա մտորումներում զգացվում է իր ժողովրդի ճակատագրով մտահոգ ակտիվ քաղաքացու արդիական կերպարը: Գրողի ասելիքը կարևոր է. նրան մտահոգում է ժամանակակից հայ մարդու ինքնահաստատման երևույթը, երբ այդ հայի սիրտը տրոփում է ոչ միայն իր անձնական եսի համար, այլև սերտորեն միանում է ժողովրդի, հասարակության շահերին ու իդեալներին: Հայ ժողովուրդը ոտքի ելավ իր ազատության, իր հայրենիքի, բռնադատված հատվածների ամբողջականության ու միասնության համար: Արամազդը սիրում է արցախցիներին. «Հյուրասեր, քաջ, տաղանդավոր արցախցիների նկատմամբ ողջ հայ աշխարհի սերը պարտադրվում է ոչ թե նրանց դժվար վիճակից, այլ նրանց կեցվածքից արժանապատվորեն կրելու հայոց բաժին ընկած փորձությունները և այդ փորձությունները հաղթահարելու, ազգային դեմքն ու դիմագիծը անաղարտ պահելու և իրենց կիսավայրի տերերի շառլատանությունը ու գաղութային տենչը արհամարհելու և գալիքի նկատմամբ հավատը անկոտրում պահելու համար»(էջ75):

Պատերազմ. Ղարաբաղի ժայռեղեն կամքին էին բախվում և ջարդվում ազերիների արյան ու թալանի ծարավ, հզոր բանակի զորամիավորումները: Ադրբեջանի ղեկավարները իրարանցման մեջ էին. իրար էին հաջորդում Բագիրովը, Վեզիրովը, Մութալիբովը, Էլչիբեյը, ի վերջս՝ Հեյդար Ալիևը: Բոլորն էլ հերթով իրենց ատամների սրությունն էին փորձում՝ անօգուտ:

Եթե ոչ ֆիզիկապես, Արամազդն ամեն օր հոգով և սրտով այնտեղ էր՝ հանրահավաքներում, ռադիոընդունիչի կամ հեռուստացույցի առաջ: Նա նաև այնտեղ էր՝ Ղարաբաղում, գործողությունների կիզակետում: Ստեփանակերտը գերմարդկային ջանքեր էր թափում ապրելու, գոյատևելու համար: Նկուղներում, պատսպարաններում՝ պարենի չնչին պաշարներով, հոսանքի բացակայությամբ՝ Արցախը, միևնույն է որոշել է մեռնել, բայց չզիջել: Մեռնել, բայց Աստծուց բացի այլ տիրոջ չճանաչել, միմիայն նրան ապավինել և իր բազկի ուժին:

Փոխվում էին Ադրբեջանի ղեկավարները, պաշտպանության նախարարները: Թուրքիան իր կրտսեր եղբորն օգնելու համար զինվորական բարձրաստիճան կադրեր էր մտցնում Ադրբեջան: Անօգուտ: Գրողներն ու հրապարակախոսները ոգևորում էին ռազմիկներին՝ նախնիների «հերոսական» կերպարներով: Նույնիսկ Ղաչաղ Նաբին ազգային հերոս էր հռչակվել: Դա այն թալանչի, գող, անառակ Նաբին էր, որ գնդակահարվել է ընկերոջ կողմից՝ անառակության համար: Հիմա այդ նույն Նաբու կերպարով պիտի ոգևորվեն ազերիները՝ իրենց հակահայկական արշավանքների ժամանակ:

Սակայն թուրքական գաղափարախոսությունը լավ է ըմբռնում իր բանակի պարտության և հայ երկրապահների հաղթության պատճառը, բայց չէր համարձակվում ասել, որ «հայերը վարում են արդար, սրբազան պատերազմ, իսկ ազերիներն այդ կռվում չունեն որևէ սրբազնագույն նպատակ, որին նվիրեին իրենց կյանքը: Ակադեմիկոս Սախարովի այրին հրաշալիորեն բանաձևեց իրար դեմ կանգնած բանակների քաղաքական և բարոյական խնդիրները: Հայերը կռվում են իրենց հայրենի հողի, իսկ ազեր-թուրքերը՝ իրենց ամբիցիայի համար»»(էջ274):

Շուշիից հետո ազատագրվում են Քարվաճառի, Լաչինի, Ֆիզուլու, Կուբաթլուի, Զանգելանի, Աղդամի շրջանները, Արցախի զգալի մասը: 1994թվականի զինադադարը պարզապես փրկություն էր Ադրբեջանի բանակի համար, որն ապրում էր հուսալքման և բարոյական ծանր վիճակ: Հայոց ուժերը կատարել էին իրենց առջև դրված ստրատեգիական խնդիրը և պատերազմի շարունակումը Ադրբեջանի համար կդառնար նոր տերիտորիաների կորուստ, նույնիսկ Գյանջայի անկման պատճառ:

Արամազդին զբաղեցնում էին հայ ժողովրդի պատմության հարցերը: Տառապած ժողովուրդ ենք, բայց չենք հոգնել: Մտահոգված էր, մտածեց, վերլուծեց, թափանցեց պատմության հաճախ անվերծանելի, աշխարհից անհայտ, չլուսավորված տեղերը, ու շարունակեց իր զրույցը ժողովրդի հետ. «Դու ունես քո Աստվածը, ունես քո հավատը, դու ունես և տիրում ես հարատևելու համարյա անհայտ հնարքին, գուցե դա է պատճառը, իմ կապուտաչյա Նաիրի, որ աշխարհը դեռ չի կարողանում պեղել քո հարության գաղտնիքը…»(էջ324):

Արամազդին զարմացնում է նաև այն, որ թեև կյանքն ընկնում էր նորմալ հունի մեջ, սակայն չէին բացահայտվում քաղաքական սպանությունները, որոնց թիվն անցնում էր չորս տասնյակից: Երբեմն թվում է, թե գլխավոր հերոսը հիմա համեմատաբար հանգիստ է, բայց միտքն արթուն է, միտքը հնարավո±ր է կանգնեցնել: Ու սկսում է մտքի կռիվը. սուտը, կեղծիքը, երեսպաշտությունը բույն է դրել մեր շրջապատում, մարդ անհատը բարձրանալու փոխարեն իջնում է, հեռանում Աստծուց: Շատացել են սուտ և անհեթեթ տեսությունները, կուսակցությունները, որոնք միայն մեկ նպատակ պետք է ունենան՝ օգնել մարդուն գնալու դեպի կատարյալը:

Արամյանները երկու որդի ունեն՝ Ռուբենը և Արմենը: Ավագը ամուսնացած է, ունի Արամազդիկ որդի, իսկ Արմենը իրավաբանական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանող է:Որդին՝ Արմենը, որոշել է գնալ Ղարաբաղ և միանալ կռվողներին: Հոր խոսքը ազդեցիկ էր, զսպված արցունքներով, տղամարդավարի.«… ես գիտեի, որ դու այլ կերպ վարվել չէիր կարող: Գնա, օրհնում եմ ճանապարհդ, դու ես քո ճանապարհի տերը, թող բոլոր խոչուխութերը հետ քաշվեն և բացեն քո առաջ մեր հաղթության ճանապարհը: Գնա՛, որդի՛ս, բարով գնա և փառքով, հաղթանակով վերադարձիր»(էջ80):

Արամազդը ճիշտ է ընկալում կյանքը: Ընկերոջ՝ Հարությունի մասին, ճիշտ է, մտածում է, բայց գտնում է, որ սխալը հենց Հարությունի մեջ է: Ջահելները սիրում են իրար: Իսկ երբ լսում է, որ Զարուհին էլ է մեկնել Ղարաբաղ, դիմում է կնոջը՝ Հեղինեին. «Կարծում ես Զարուհու հայտնվելը Արմենի մոտ, առաջավոր գծում, պատահական կամ լոկ հայրենասիրական արա՞ք է: Կարող եմ պնդել, որ Զարուհուն Արցախ տանող զորավոր պատճառներից մեկը նրա սերն է եղել մեր որդու նկատմամբ»(էջ125): Ավելի ուշ նա կխոստովանի, որ դեմ չի լինելու նրանց ամուսնությանը, և օրհնելու է նրանց միությունը:

Վեպում ուշագրավ է Արամազդի և իր մանկության ընկեր ճակատ Սարգսի հանդիպումը: Վարպետ զինագործներ էին Սարգիսը և որդին, որին ընկերոջ պատվին Արամազդ էր անվանել: Նրանք որոշել են Ռուսաստանից վերադառնալ և հաստատվել Հայաստանում: Սարգիսը որոշել է գնալ Ղարաբաղ.« Ես ողջունում եմ ձեր հայրենասիրական որոշումը: Բոլոր կանոնավոր հայերի տեղը հիմա Հայաստանն է,- ասում է Արամազդը:- Հարկավոր է սատար կանգնել ժողովրդին» (էջ163):

Արցախյան շարժման մասնակից ֆիդայիները՝ նորօրյա զինյալները, հայ ժողովրդական էպոսի հերոսների շառավիղներն են, նրանց նման քաջ ու բարի, խաղաղասեր, վեհանձն ու արդարադատ: Այդ ֆիդայիներից մեկն է Արամազդի կրտսեր որդին՝ Արմենը, որի մեջ խտացված են հայ ողջախոհ երիտասարդի, քաջ ազատամարտիկի, հմուտ հրամանատարի, հնազանդ որդու և հոգատար ամուսնու գծերը: Վեպում տրվել է Արմենի և Զարուհու սիրո պատմությունը, որը գեղեցիկ է, յուրօրինակ և բացահայտում է կողմերից յուրա քանչյուրին որպես ազնիվ, հավատարիմ և անկեղծ սիրահար, մարդ իր երկիրը սիրող ,ազնիվ քաղաքացի:

Արմենը թրծվում է մարտի բոցերում: Նա մեկն էր այն մարտիկներից, ովքեր տարերայնորեն, բայց համոզված կռվեցին՝ դառնալով նորաստեղծ բանակի միջուկը: Ջոկի հրամանատար Արմենը ստիպված էր շատ բան ինքնուրույն սովորել: Նրան սատարում, խորհուրդներով օգնում էր հոր ընկերը՝ փոխգնդապետ Վանունցը, որն ընթերցողին ներկայանում է որպես ուժեղ բնավորությամբ մի խստապահանջ զորական, ում համար թանկ է ու սրբասուրբ Արցախի յուրաքանչյուր թիզ հողը: Վանունցը ուշադիր է և հոգատար իր մարտիկներից ամեն մեկի նկատմամբ: Հանդիպելով ազերի խուժանի կատարած անգթություններին, դիմում է Արմենին հետևյալ խոսքերով, որպեսզի ոգեշնչի նրան և ցույց տա նաև թշնամու չնչինությունը. «Հիշենք Անդրանիկի հաղթանակները, հիշենք Սարդարապատը, Բաշ Ապարանը Ղարաքիլիսան, Հասան Ղալան, Շարուրը և այլն և այլն: Հիշենք Անդրանիկի թևավոր խոսքը թուրք ռազմիկների մասին. «Նրանք արդեն հերոսաբար են մարտնչում օրորոցների դեմ: Եղա՞վ…»(էջ99):

Ընթերցողն անցնում է Վանունցի անցած ճանապարհով, ցույց տալիս նրա քաղաքական, և մարտական կոփվածությունը: Փոխգնդապետ Քաջ հրամանատար է, կայուն բնավորությամբ օժտված հայորդի, դրա հետ մեկտեղ՝ մարդ: Պատերազմական թեժ գործողությունների մեջ, այնուամենայնիվ, նա չի կարողանում անտարբեր լինել ազատամարտիկների հոգեկան աշխարհի, անձնական կյանքի նկատմամբ: Նա վաղուց կարոտել է խաղաղ ու հանգիստ կյանքին, ընտանեկան երանավետ անդորրին, բայց հայրենիքի կանչով անձնուրացորեն կատարում է իր պարտքն այնպես, որ ընթերցողը համոզվում է, որ նրա գործերի գործը Արցախն ազատագրելն է: Հրամանատարն ու մարդը ներդաշնակվում են Վանունցի մոտ, լրացնում իրար՝ ամբողջացնելով կերպարը:

Կենցաղային-ընտանեկան սյուժետային գործողություններում սկզբում առաջին պլանում էր Զարուհի-Հարություն-Արմեն հոգեբանական հանգույցը: Հետո առաջին պլան է մղվում ավագ որդու՝Ռուբենի կերպարը, որին հեղինակը ներ է քաշում սիրային այլ հանգույցի ոլորտը. նրան սիրում է զոհված ազատամարտիկի ջահել այրին՝Հասմիկը, որին տենչում է ու ուզում է տիրանալ Վիուլը՝դավերով ու բանսարկություններով: Հասմիկը անկեղծորեն սիրում է Ռուբենին և չի ընդունում Վիուլի սիրահետումները:Սարգսյանը անակնկալ ձևով է լուծում սիրավեպը. ինչպես կյանքն է բարդ ու առեղծվածային, այդպես էլ Հասմիկի հոգեկան աշխարհում են կատարվում հանկարծակի փոփոխություններ և նա ընդունում է Վիուլի սերն ու նրա հետ հեռանում քաղաքից: Գուցե նա համոզվում է, որ Ռուբենի ընտանիքը անառիկ ամրոց է, իսկ իր սերը՝ժամանակավոր, և նախընտրում է սեփական ընտանիք կազմել: Կանացի բնազդով երևի նա հասկանում է, որ զուր են իր ջանքերը՝լիովին տիրանալ Ռուբենին, դրա համար վերջնականապես ընտրում է Վիուլին:

«Նա, որ ապրել էր իր լիարժեք աշխարհիկ կյանքով,-գրում է Ս. Սարինյանը,-թե° անձնական և թե° հասարակական , ճանաչված մտավորական էր, գործիչ և գրող-հրապարակախոս, այժմ, ահա, կաթվածահար գամվել էր անկողնուն՝կյանքի ու մահվան վճռին հանձնելով իր գոյության ողբերգական ժամանակը: Եվ սակայն անխաթար է մնում բանականությունը, որ նրան կապում է կյանքի հոսանքին՝ընկալելու իրադարձությունների ընթացքը և որոնելու ճշմարտությունը անցյալի ու ներկայի զուգահեռներում»[1]:

Դարավերջի հայը փլուզված հայրենիքի խորհրդանշանն է, հայ, որը հավատացել է խորհրդային իշխանությանը, հպարտությամբ կրել կուսակցական տոմսը, լծվել և ձուլվել այդ երկրի դժվարին պատմությանը: Դարավերջի բարձունքից նայելով իր վաստակին՝ Արամազդ Արամյանը միանգամայն հպարտորեն է ներկայացել ժամանակի ահեղ դատաստանին՝ապացուցելով, որ իզուր չեն անցել ապրած տարիները՝միշտ ունկնդիրը լինելով պատմության զարգացման կենդանի զարկերակին և վերարտադրելով նրա հևքն ու թրթիռները:

Վիպագիր Սարգսյանը յուրահատուկ ձև է ընտրել՝վեպի վերջում ներկայացնելով դարավերջի հայի մտորումները՝հարցազրույցի տեսքով: Ամերիկացի թղթակից միստր Սթոունի այն հարցին, թե« Ինչպե՞ս կբնորոշեք այսօրվա հային», Արամազդը պատասխանում է. «Հայն այսօր ինքնուրույն քայլելու մանկական երազանքն ունի, որն ընկնելով, բարձրանալով, երբեմն անկման ցավից տնքալով, հաճախ հողին ամուր կանգնելուց ուրախացած՝կատարում է հետագա ավելի հաստատ քայլերը: Հայն ունի Աստծուց տրված և Աստծուն բնորոշ հարություն առնելու հանճարը: Հարկադրական վայրէջք, տառապալից ջանք՝ դժոխքը դրախտի վերածելուն, դրախտն ու դժոխքը հավասարապես բնակելի տարածք դարձնելու անհնարին հնար: Ի վերջո, խորագնաց արմատներ, իսկ ճյուղերով՝այլոց տնամերձների ցանկալի վարձակալ՝անորոշ ժամանակով»(էջ366):

«Դարավերջի հայը» վեպը ցույց է տվել, որ Սարգսյանի հուշերի թաքույցներում պահված էին ներանձնական սյուժեներ, որն էլ հեղինակը վարպետորեն միահյուսել է հայ քաղաքական և համազգային պայքարի հետ :«Նա պարզապես չէր կարող լրիվ չապրել իր Հայրենիքի պատմությունը,իր և մեր կենսագրությունը,այն երկրայինն ու տիեզերականը,որ իրականում բոլորինս է,բայց քչերն են հասու լինում այդ ժառանգության պարտքին ու պատասխանատվությանը:Իսկ հասու եղածներից քչերն են կարողանում այնքան ուժ ու զորություն գտնել,որպեսզի մինչև վերջ տանեն այդ ծանրագույն ու դժվար խաչը: Մկրտիչ Սարգսյանը ,հիրավի, մեկն էր այդ քչերից…»,- գրում է Ներսես Աթաբեկյան[2]:

[1] Գրական հայրենիք, 2001,հ.2:

[2]Հայաստանի Հանրապետություն,1 մայիսի,2003թ.:

Օգտագործված գրականություն

1.Մկրտիչ Սարգսյան, «Դարավերջի հայը», Ե.,1999:
2.Ժամանակակից հայ արձակը, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1981:
3.Գրական հայրենիք,2001թ.հ. 2:
4. Հայաստանի Հանրապետություն,1 մայիսի,2003.: